ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019
Տարեկան

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2019թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ներկայացված է 03.02.2020թ. համայնքի ժողովում:
/Ձեկ.՝ համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան/

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Տանձուտի համայնքապետարանի և ավագանու կողմից 2019թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 8 ավագանու նիստ՝ կայացրել 49 որոշումներ: Պատասխանել ենք ստացված 396 մտից գրություններից 291-ին և 341 քաղաքացիների դիմումներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2019 թ-ին ընդունվել է համայնքի ղեկավարի 116 որոշում և արձակվել է 45 կարգադրություն:

Համայնքի սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքներին տրամադրվել է 94 հազ.դր. դրամական օգնություն: Համայնքում 2019թ ընթացքում ծնվել է 24 երեխա 11 ընտանիքների տրվել է երեխայի ծննդյան խրախուսում 350.0 հազ. դրամ:

Ապահովել ենք բնակիչներին անխափան ջրամատակարարում;
Մարտի 25-ից -29 ընկած ժամանակահատվածում համայնքի կոյուղագծի որոշակի հատված 67 մ երկարությամբ ամբողջովին նորացվել է;
Կատարվել է խմելու ջրի սանիտարաքիմիական և մանրէաբանական հետազոտություններ:

Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

Համայնքապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվառում:

Հանձնաժողովի կողմից կատարվել հունիսյան ցանքատարածությունների հաշվառում:

Մեծ հաղթանակի 74-րդ տարեդարձի նախօրյակին խնամվել է համայնքի կենտրոնում գտնվող հուշարձանը և տարածքում կատարել ենք վարդերի տունկ, ցանել տարբեր տեսակի ծաղիկներ: Կազմակերպվել է միջոցառում մայիսի 9-ին համայնքի երեխաների մասնակցությամբ,որոնք իրենց ռոջույնի խոսքերով և երգ , երաժշտությամբ տոնական տրադրություն ապահովեցին Տանձուտ համայնքի բնակչությանը; Միջոցառման մասնակցում Արմավիրի մարզի պարային համույթը:
Թարմացվել է համայնքի պատմամշակույթային արժեք ունեցող զոհվածների հուշարձանի ծաղկեպսակների թարմացում, ավելացվել են նստարաններ և աղբամաններ, ցանկապատվել է խաղահրապարակը:

Տանձուտի միջնակարգ դպրոցի շրջանավարտների հրավերով մասնկցել ենք վերջին զանգի միջոցառմանը , համայնքի միջոցներով ձեռք են բերվել նվերներ և հանձել շրջանավարտներին:

Երեխաների պաշպանության օրվան նվիրված հունիսի 1-ին համայնքի երեխաների օրը ավելի հետաքրքիր և ուրախ անցակացնելու համար մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառում:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ համայնքի դպրոց հաճախող թվով 25 1-ին դասարանցիներին հատկացվել է դպրոցական պայուսակներ գրենական պիտույքներով:

Տանձուտի մշակույթի տանը կազմակերպվել է ամանորյա միջոցառում համայնքի երեխաների հետ, գրադարանավար Արմինե Հարությունյանի նախաձեռնությամբ և համայնքի մրջոցներով ձեռք է բերվել ամանորյա նվերներ և տրվել համայնքի թվով 250 երեխաների: Համայնքապետարանում կազմակերպվել է ամանորյա միջոցառում և հյուրասիրություն, մասնակցել են համայնքի բնակիչներից, ավագանիներից: Ներկա են նաև եղել համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցները:

Գյուղում գործում է 19-րդ դարի եկեղեցի, որը օգնում է համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությանը :

2019 թվականի «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակում համայնքում պարբերաբար կազմակերպվել է շաբաթօրյակ, որին մասնակցել են համայնքային ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպությունները և բնակիչները:

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները:

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ և խցանված կոյուղագծերի կեղտաջրերի հեռացման աշխատանքներ:

Հողի հարկի տարեկան պլան է նախատեսվել 6900,0 հազ.դրամ փաստացի կատարվել է 6268 հազ.դ. 90.8% -ով:

Վարձակալական հողերի վարձավճարների տարեկան պլանը կազմել է 2000.0դրամ. ,փաստացի կատարվել է 2445.6 հազ.դ. , 122.2 %- ով:

Գույքահարկի գծով տարեկան պլան է նախատեսվել 6001,9 հազ.դր., փաստացի կատարվել է 6178.4 հազ.դրամ, կամ 103% -ով:

Տեղական տուրք է նախատեսվել 430.0 հազ.դրամ փաստացի 371.1 հազ.դրամ 86,3 % -ով:

Մատուցվող ծառայությունների դիմաց տարեկան պլանը նախատեսվել է 1000.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 506.5 հազ.դրամ 50.7% -ով:

Տեղական վճարներ՝ տարեկան պլան կազմել է 850.0 հազ. դրամ փաստացի կատարվել 248.0 հազ. դր., որից

աղբահ. վճարներ 218.4

Ինքնակամ կառուցված շենքերի օրինականացում նախատեսվել է 1300.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 1548.2հազ.դրամ, կամ 119 %

Վարչական իրավախախտումներ տարեկան պլանը կազմել է 200.0 դրամ, փաստացի կատարվել է 199.5 99.8

Համայնքի սեփական եկամուտների տարեկան պլանը ընդամենը կազմել է 18681.9 հազ.դրամ, փաստացի կատարվել է17765.3 հազ.դրամ, 95.0 %-ով:

Պետության կողմից համահարթեցման սկզբունքով ստացված դոտացիայի տարեկան պլանը կազմել է 31321,2 հազ.դրամ փաստացի կատարվել է 31321.2 հազ. դրամ կամ 100%-ով

Հողի օտարում նախատեսվել է 1000.0, փաստացի՝ 388.2 հազ.դրամ:

Կանանց միջազգային օրվա առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հանձնվել է նվերներ համայնքային ենթակայությամբ աշխատող կանանց և աղջիկներին, տարեց թոշակառուներին :

Համայնքի փողոցներում լուսավորությունը ապահովելու համար ձեռք են բերվել անհրաժեշտ փողոցային լուսատուներ և սարքավորումներ, և դրա հիման վերականգնվել է մի շարք փողոցների լուսավորությունը:

Համայնքի փողոցները բարեկարգման նպատակով տարվել են աշխատանքներ :

Վերակառուցվել է Տաձուտի մշակույթի տան տանիքը և շենքի հետնամասի պատուհանները փոխվել են, տեղադրվել են նոր մետաղապլաստե պատուհաններ:

Համայնքապետարանը աշխատավարձի պարտքեր չունի:

Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:
Հետագա ծրագրերում նախատեսված է մանկապարտեզի վերանորոգում:

Խմելու ջրի ջրագծերի վերանորոգում, համայնքը չունի համապատասխան միջոցներ և ակնկալում է պետական աջակցություն :

Համայնքապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Նոր ջրագծի կառուցում
3. Հուշարձանի վերանորոգում
4. Համայնքապետարանի շենքի վերանորոգում
5. Համայնքի կոյուղու վերանորոգում
6. Փողոցների գազաֆիկացում
7. Ճանապարհների վերանորոգում
8. Մշակույթի տան վերանորոգում

Տանձուտ համայնքի ղեկավար / Մ.Պետրոսյան